C. E. P. F. A.

ՖՐՄՈՒԿՅԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

No. 21

01.11.2023

Մեր «վարսահարդարդեսպանները» Լիոնում

Ամռակուրդի ընթացքում ևս մեր վարսահարդար ուսանողները ձեռքերը ծալած չնստեցին. «Կարողությունների հզորացում ծրագրի» շրջանակում ՍԵՊՖԱ-ի «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտության ուսանողները հուլիսին հագեցած երկշաբաթյա վերապատրաստում անցան Ֆրանսիայի Լիոն քաղաքում: Նպատակը մասնագիտական ֆրանսերենի կատարելագործումն էր:

Կենտրոնի չորս ֆրանկոֆոն ապագա վարսահարդարները ոչ միայն տեսական, այլ նաև գործնական հմտությունները բարելավելու մեծ հնարավորություն ունեին, քանի որ պրակտիկան Լիոնի հայտնի գեղեցկության սրահներում անցկացնելը մեծ առավելություն է:

Կենտրոնի ուսանողներն ու դասախոսական կազմը աշխատանքային բուռն շաբաթ ունեցան ՍԵՊՌ-ում՝ շրջայց կամպուսում, գործնական պարապմունքներ, փորձի փոխանակում ֆրանսիացի գործընկերների հետ, նոր գիտելիքների և ծանոթությունների ձեռքբերում:

Մեր «դեսպանները» հնարավորություն ունեին նաև շրջելու Լիոնում:

Պատերազմի մասնակից ուսանողները՝ Մարսելում

Եվս մեկ այց. այս անգամ ուղղությունը դեպի Ֆրանսիայի հարավ էր: ACFOA-ի կողմից իրականացվող միջազգային համերաշխության ծրագրի շրջանակում օգոստոսի 15-ին ՍԵՊՖԱ-ի ուսանողների մի խումբ մեկնեց Մարսել՝ Septèmes-les-Vallons համայնք. խմբի անդամները Արցախի 44-օրյա պատերազմի մասնակիցներ էին կամ նրանց ընտանիքի անդամներ: Երկշաբաթյա շրջագայության ընթացքում մեր ուսանողները կատարեցին մշակութային այցեր, հանդիպումներ ունեցան տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հնարավորություն ունեցան շփվելու տեղի հայ համայնքի հետ:

Կամրջելով կրթությունն ու աշխատաշուկան

Հուլիսի 3-ին և 4-ին ՍԵՊՖԱ-ի Կարիերայի կենտրոնի պատասխանատու Անուշ Ստեփանյանը մասնակցեց CareerLab-ի կողմից իրականացված «Կամրջային կրթություն և աշխատաշուկա» թեմայով մասնագիտական կողմնորոշման վերապատրաստմանը: Դասընթացի նպատակն էր ՄԿՈՒ հաստատություններում զարգացնել կարիերայի կենտրոնների մասնագետների գիտելիքներն ու հմտությունները և ամրապնդել կարողությունները՝ ՄԿՈՒ շրջանավարտների աշխատունակությանը նպաստելու համար:

ՍԵՊՖԱ -ն՝ EfVET տարեկան համաժողովին

Հոկտեմբերի 25-28-ը Հունաստանի Հռոդոս կղզում տեղի ունեցավ EfVET (European Forum for Vocational Education&Training) 32-րդ տարեկան համաժողովը, որին մասնակցեցին նաև ՍԵՊՌ-ը և ՍԵՊՖԱ-ն: Future Skills for Green Transition թեմայով կոնֆերանսին կենտրոնը ներկայացրեց տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Ե.Մարտիրոսյանը:

Արդյունավետ ու ոգեշնչող աշխատաժողովների ընթացքում քննարկվեցին կանաչ նախաձեռնությունների լավագույն փորձն ու ապագա անելիքները:

Դիպլոմների հանձնում

Մասնագիտական բարձր որակավորում ստացած ևս մեկ սերունդ ՍԵՊՖԱ-ն ճանապարհեց դեպի նոր կյանք: Կենտրոնում տեղի ունեցավ 2022-2023 ուստարվա շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողություն: Հուսով ենք՝ ՍԵՊՖԱ-ում ստացած գիտելիքներն ու հմտությունները կօգնեն մեր շրջանավարտներին դառնալ աշխատաշուկայում մրցունակ մասնագետներ:

Հանդիսավոր մուտք

Սեպտեմբերմեկյան միջոցառմանը նախ ողջույնի խոսքով հանդես եկան տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Ելենա Մարտիրոսյանը, Որակի ապահովման պատասխանատու Աիդա Դաբաղյանը, դասախոս, Կարիերայի կենտրոնի պատասխանատու Անուշ Ստեփանյանը, որին հաջորդեց յուրահատուկ խաղ. կենտրոնի 2-րդ և 3-րդ կուրսերի սովորողները հետաքրքիր խաղի միջոցով փորձեցին պարզել, թե առաջին կուրսեցիներն ինչքանով են ծանոթ կենտրոնի գործունեությանը: Առավել աչքի ընկած ուսանողներն արժանացան մրցանակների:

ՍԵՊՖԱ ընդունված 1-ին կուրսի ուսանողները այս հաստատությունից դուրս կգան նախաձեռնող, քաղաքացիական առումով ակտիվ և նպատակասլաց՝ կյանքում առաջընթացի կարգախոսով:

ՈՒԽ նիստ

ՍԵՊՖԱ-ում տեղի ունեցավ ուսխորհրդի առաջին նիստը: Ներկաներին ներկայացվեց Ուսխորհրդի կանոնադրությունը, տեղի ունեցավ Որակի ապահովման ուսանողական հանձնաժողովի կազմի ընտրությունը, հաստատվեց 2023-2024 ուստարվա միջոցառումների ծրագիրը, ինչպես նաև քննարկվեցին Ուսուցչի տոնին նվիրված միջոցառման կազմակերպչական հարցեր:

Ուսուցչի տոնը ՍԵՊՖԱ-ում

Հոկտեմբերի 5-ին՝ Ուսուցչի տոնին, ՍԵՊՖԱ-ի ՈՒԽ անդամները ջերմ ընդունելությամբ դիմավորեցին իրենց սիրելի մանկավարժներին:

Ուսանողները դասախոսներին ուղղված ջերմ ուղերձում կարևորեցին այն դերը, որը ստանձնել են նրանք՝ օգնել սերունդներին մնալ հայ ու ձգտել մտքի, հոգու ու մարմնի կատարելության: Բոլորն են հասկանում, որ ուսուցչի աշխատանքից է կախված մեր վաղվա օրը, հույսի ու երազի չափը: Հրուշակագործ ուսանողներն իրենց ձեռքով պատրաստած անվանական անուշահացերով հյուրասիրեցին մանկավարժներին: Դրան հաջորդեց ևս մեկ անակնկալ. օրվա առաջին դասը դասախոսների փոխարեն վարեցին ուսանողները:

Հայրենի բնությունը հյուրընկալ է. «Քայլարշավային փառատոն»-2

Սեպտեմբերի 9-ին և 10-ին Սևանը հյուրընկալեց «Քայլարշավային փառատոն»-ի՝ Fest-Camp-ի մասնակիցներին, որին մասնակցեցին նաև կենտ-

2

րոնի դասախոսներ և ուսանողներ: Երկու օրերի ընթացքում կազմակերպվեցին հանդիպումներ երիտասարդական ակումբների, քայլարշավային, լեռնային, էկոտուրիզմի մասնագետների հետ: Փառատոնը նպատակ ուներ երիտասարդներին ներգրավել քայլարշավային տուրիզմի զարգացման գործին, նրանց շրջանում իրականացնել քայլարշավային տուրիզմին ուղղված վերապատրաստումներ և փորձի փոխանակումներ, մարզի համայնքների հետ ապահովել ցանցային համագործակցություն, ինչն էլ հնարավորություն կընձեռի ձեռք բերել քայլարշավային տուրիզմին առնչվող հմտություններ և այդ տեսանկյունից բացահայտել մարզը:

Խմբային արշավների անվտանգ կազմակերպում

Արշավային ակումբների և երիտասարդական ասոցիացիաների համար նախատեսված սեմինարին մասնակցեց նաև ՍԵՊՖԱ-ի Կարիերայի կենտրոնի պատասխանատու Անուշ Ստեփանյանը: «Լեռներում խմբային արշավների անվտանգ կազմակերպման մասին առաջին սեմինարը ի նպաստ Հայաստանում էկոտուրիզմի զարգացման» խորագիրը կրող դասընթացն արդեն կայացած փաստ է. մասնակիցները կկարողանան կառուցել համապատասխան արշավային երթուղիներ, կազմակերպել, ուղեկցել և վերահսկել խումբը արշավի ժամանակ՝ ապահովելով անվտանգությունը:

Դասընթացը հագեցած էր նաև անիմացիոն և հաղորդակցական մասերով:

Որպես վերջաբան... Քայլարշավ դեպի Ապարանի ջրամբար

Այսպիսով ԱՖՐԱՏ-ն ավարտում է 7 ամսվա առաքելությունը Հայաստանում. ԱՖՐԱՏականներն իրենց գործունեությունն ամփոփեցին ՍԵՊՖԱ-ի երիտասարդների ու ուսուցիչների հետ զբոսանքով՝ վայելելով աշնան վերջին արևոտ օրերը: ՍԵՊՖԱ-ի 31 ուսանող և 4 դասավանդող կրկին հնարավորություն ունեցան վայելելու մի գեղեցիկ օր բնության գրկում:

Մեր ներկայացուցիչները 7 կմ երկարությամբ քայլարշավ անցկացրեցին Ապարանի Ջրամբարում:

Լեռնագնաց Վիկտոր Նիկոլայը մասնակիցների հետ կիսվեց վայրի բնության մասին իր գիտելիքներով, իսկ օրն ավելի ուրախ ավարտելու համար կազմակերպվեցին հետաքրքիր խաղեր:

Աջակցելով արցախահայությանը. արտահերթ Career City Fest

Career City Fest-ը, որը համախմբում է երկրի լավագույն գործատուներին մեկ հարթակում, այս տարի իրականացվեց արտահերթ ու հատուկ ձևաչափով: Արտահերթ, քանի որ նպատակ ունի առաջին հերթին աջակցել Արցախից տեղահանված մեր հայրենակիցներին՝ աշխատանքի, կրթության, սոցիալական ոլորտներում, օգնելու նրանց ճիշտ կողմնորոշվել Հայաստանի աշխատաշուկայում:

ՍԵՊՖԱ-ի ուսանողական ներկայացուցիչները Կարիերայի կենտրոնի պատասխանատու Ա. Ստեփանյանի հետ մասնակցեցին արտահերթ Career City Fest-ին՝ ներկայանալով իր առանձնացված տաղավարով:

Մեր պատվիրակները ներկայացրեցին կենտրոնի գործունեությունը, խոսեցին արցախցիների զբաղվածության ռազմավարության, մարտահրավերների ու հնարավորությունների մասին: